ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2019թ. թիվ 644-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության, ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. նոյեմբերի 8-ի թիվ 634-Ա որոշման 1-ին կետի՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության 24,541,000 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 184,000 ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 24,357,000 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 1999 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 157-Ա որոշմամբ հաստատված «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 24,357,000 դրամ (քսանչորս միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար), որը կազմում է 1059 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 23,000 դրամ:

Բոլոր 1059 բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, որի անունից բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնում է Հիմնադիրը»:

3. Հանձնարարել «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր